

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. «Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՊՄՀ) ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ՀՊՄՀ ուսանողներին և ասպիրանտներին միավորող՝ համալսարանական ինքնակառավարվող հասարակական միավորում է, որի նպատակն է միավորել և նպաստել ուսանողների և ասպիրանտների գիտական, հետազոտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:

1.2. Ընկերությունը որպես հասարակական միավորում չունի իրավաբանական անձի կարգավիճակ և իր գործունեությամբ ղեկավարվում է «Հասարակական կազմակերպությունների մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

1.3. Ընկերության կանոնադրությունը և նրանում կատարվող փոփոխություններն ու լրացումները հաստատվում են Ընկերության ընդհանուր ժողովի կողմից՝ Ընկերության նախագահության ներկայացմամբ:

1.4. Ընկերության հարաբերությունները ՀՊՄՀ մարմինների հետ կառուցվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան, ՀՊՄՀ-ի շրջանակներում գործող ներկազմակերպական կանոններով, ՀՊՄՀ Գիտական խորհրդի և ռեկտորի այն որոշումներով, որոնք ուղղված են Ընկերության կանոնադրական նպատակների իրագործմանը, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

1.5. Ընկերությունն իր նպատակների ու խնդիրների իրականացման նպատակով համագործակցում է ՀՊՄՀ-ի գիտական և ուսումնական ստորաբաժանումների, ուսանողական խորհրդի, արհեստակցական կազմակերպության և այլ մարմինների հետ:

1.6. Ընկերության անվանումն է.

- հայերեն՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանողական գիտական ընկերություն կամ կրճատ՝ ՀՊՄՀ ՈԻԳԸ,

- ռուսերեն՝ Студенческое Научное Общество Армянского государственного педагогического университета им. Х.Абовяна կամ կարճ՝ СНО АГПУ,

- անգլերեն՝ Students Scientific Society of Armenian State Pedagogical University after Kh. Abovyan կամ կարճ՝ SSS ASPU:

1.7. Ընկերությունն ունի ձևաթուղթ, դրոշմակնիք, այլ անհատականացման միջոցներ:

1.8.7 Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 10, Տիգրան Մեծի 17, Խանջյան 5:

2. Ընկերության նպատակներն ու խնդիրները

2.1. Ընկերության հիմնական նպատակն է աջակցել, նպաստել ՀՊՄՀ ուսանողների և ասպիրանտների կրթական, գիտական, հետազոտական, ստեղծագործական գործունեությանը, ինչպես նաև կազմակերպել ու համակարգել այդ գործունեությունը:

2.2. Ընկերության խնդիրներն ու գործունեության ուղղություններն են.

ա) կրթական, գիտական և հետազոտական ոլորտներում ուսանողության նախաձեռնությունների սատարում, կազմակերպում և իրականացում,

բ) ուսանողական գիտաժողովների, կոնֆերանսների, սեմինարների, գիտահանրամատչելի դասախոսությունների և այլ կրթական ու գիտական ուղղվածություն ունեցող միջոցառումների կազմակերպում,

գ) միջհամալսարանական կրթական և գիտական կապերի հաստատում, համագործակցություն,

դ) համալսարանական երիտասարդական գիտական ծրագրերի և ներուժի նպատակային ուղղվածության մասին տեղեկատվության համակարգում,

ե) ուսանողներին ներգրավում կրթական, գիտական խմբերում և ծրագրերում,

զ) ուսանողների գիտական, հետազոտական աշխատանքների հրատարակում,

է) այլ կրթական, գիտական կենտրոնների, այլ բուհերի գիտական ընկերությունների հետ համագործակցություն:

3. Ընկերության կառավարումը

3.1. Ընկերության կառավարման մարմիններն են՝ Ընդհանուր ժողովը, նախագահությունը, նախագահը:

3.2. Ընկերության բարձագույն մարմինը՝ Ընդհանուր ժողովն է, որի նիստերը գումարվում են ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ:

3.3. Ընկերության Ընդհանուր ժողովը կազմավորվում է Ընկերության բոլոր անդամներից կամ 100-ից ավելի անդամների դեպքում՝ յուրաքանչյուր 5 անդամներից ընտրվում մեկ ներկայացուցիչ, որպես պատվիրակ:

3.4. Ընկերության Ընդհանուր ժողովը՝

ա) իրավասու է լուծել Ընկերության գործունեության հետ կապված ցանկացած հարց,

բ) քննարկում և որոշում է Ընկերության գործունեության կարևորագույն ուղղությունները,

գ) առաջարկություններ է ներկայացնում ՀՊՄՀ Գիտական Խորհրդին,

դ) քննարկում և ի գիտություն է ընդունում Ընկերության նախագահի տարեկան հաշվետվությունները,

ե) հաստատում է Ընկերության ընթացիկ և հեռանկարային ծրագրերը,

զ) հաստատում է Ընկերության կանոնադրություն և աշխատակարգը,

է) ստեղծում է Ընկերության աշխատանքային օղակները, ինչպես նաև հաստատում է նրանց կազմն ու աշխատակարգը,

թ) որոշում է ընդունում Ընկերության պատվավոր անդամի կոչումներ շնորհելու մասին,

ժ) կանոնակարգում է Ընկերության անդամակցությանը վերաբերող հարցերը:

3.5. Ընկերության Ընդհանուր ժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում են անդամների ընդհանուր թվի ավելի քան երկու երրորդը:

Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են անդամների ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ:

Ընդհանուր ժողովի արտահերթ նիստ կարող է հրավիրվել Ընկերության Նախագահի կամ նախագահության կողմից կամ Ընդհանուր ժողովի անդամների մեկ երրորդի պահանջով:

3.6. Ընկերության նախագահն ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից, ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ՝ երկու տարի ժամկետով:

Ընկերության նախագահը.

ա) իրականացնում է Ընկերության ընթացիկ և ամենօրյա ղեկավարումը,

բ) ներկայացնում է Ընկերությունը ՀՊՄՀ մարմիններում, այլ կազմակերպություններում,

գ) համակարգում է Ընկերության կառուցվածքային միավորների աշխատանքները:

Ընկերության նախագահի տեղակալը նշանակվում է Ընկերության նախագահության կողմից՝ նախագահի ընտրության ժամանակահատվածով և իրականացնում է Ընկերության նախագահի կողմից հանձնարարված որոշակի աշխատանքներ, այդ թվում համակարգում է Ընկերության քարտուղարության աշխատանքները և Ընկերության աշխատանքային օղակների գործունեությունը: Ընկերության նախագահի տեղակալը նախագահի բացակայության դեպքում, վերջինիս լիազորությամբ կատարում է նախագահի լիազորությունները:

Ընկերության քարտուղարը համակարգում է Ընկերության քարտուղարության աշխատանքները և կատարում է Ընկերության նախագահի կողմից առանձին հանձնարարականներ:

3.7. Ընկերության նախագահությունն Ընկերության կոլեգիալ կառավարման մարմին է և իրականացնում է Ընկերության ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակահատվածում Ընկերության ընթացիկ հարցերի համակարգումը և քննարկում:

Ընկերության նախագահությունն ի պաշտոնե ղեկավարում է Ընկերության նախագահը:

Ընկերության նախագահության անդամներն են, ի պաշտոնե՝ Ընկերության նախագահը, նախագահի տեղակալը, քարտուղարը, Ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերությունների նախագահները,

աշխատանքային խմբերի /հանձնաժողովների/ նախագահները, ինչպես նաև
Ընկերության ընդհանուր ժողովի կողմից որոշված այլ անձինք:

4. Ընկերության կառուցվածքը

4.1. Ընկերության կառուցվածքային միավորներն են՝ ֆակուլտետային
ուսանողական գիտական խորհուրդները, որոնք ձևավորվում են
ֆակուլտետների ուսանողներից և ասպիրանտներից:

Ֆակուլտետային ուսանողական գիտական խորհուրդներն
իրականացնում են Ընկերության կանոնադրական նպատակների ու խնդիրների
իրականացումը՝ տվյալ ֆակուլտետում:

4.2. Ֆակուլտետային ուսանողական գիտական խորհրդի նախագահը
ընտրվում է Ֆակուլտետային ուսանողական գիտական խորհրդի կողմից՝
ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ:

Ֆակուլտետային ուսանողական գիտական խորհրդի նախագահը
կազմակերպում և ներկայացնում է Ֆակուլտետային ուսանողական գիտական
խորհրդի աշխատանքները, հետևում Ընկերության ընդհանուր ժողովի
որոշումների կատարմանը՝ տվյալ ֆակուլտետում::

4.3. Ֆակուլտետային ուսանողական գիտական խորհրդի նիստերը
գումարվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Նիստերը հրավիրվում են խորհրդի
նախագահի կողմից կամ անդամների մեկ երրորդի պահանջով: Նիստերը
իրավագոր են, եթե նրան մասնակցում են անդամների ընդհանուր թվի երկու
երրորդը:

Ֆակուլտետի ուսանողական գիտական խորհուրդը կարող է ստեղծել
սույն կանոնադրության նպատակներին չհակասող ակումբներ և այլ միավորներ,
որոնց կարող են անդամակցել նաև Ընկերության անդամ չհանդիսացող այլ
ուսանողներ:

5. Ընկերության միջոցները և դրանց օգտագործման կարգը

5.1. Ընկերության միջոցները գոյանում են ՀՊՄՀ ֆինանսական կամ այլ
գույքային հասկացումներից, այլ կազմակերպությունների, հիմնադրամների
նվիրատվություններից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

5.2. Ընկերությունն անվճար կարող է օգտվել ՀՊՄՀ գույքային,
ստրաժեգիային և այլ միջոցներից՝ ռեկտորի կողմից որոշված սահմաններում:

5.3. Ընկերության միջոցները օգտագործվում են բացառապես Ընկերության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար: